Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 24th July 2022 Bulletin 32/2022

Transfiguration (*Vartavar*)

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ1:1-7

Կեանքի Խօսքին մասին - որ սկիզբէն էր, որ մենք լսեցինք, որ մեր աչքերով տեսանք, որ դիտեցինք ու մեր ձեռքերը շօշափեցին. (արդարեւ կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք ու կը պատմենք ձեզի այդ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը քով էր եւ յայտնուեցաւ մեզի.) - ինչ որ տեսանք ու լսեցինք՝ կը պատմենք ձեզի, որպէսզի դո՛ւք ալ հաղորդութիւն ունենաք մեզի հետ: Մեր հաղորդութիւնը Հօրը հետ է, եւ իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի հետ: Կը գրենք ձեզի այս բաները, որպէսզի ձեր ուրախութիւնը լման ըլլայ:

Եւ սա՛ է այն պատգամը՝ որ լսեցինք իրմէ ու կը հաղորդենք ձեզի, թէ Աստուած լոյս է, եւ անոր մէջ բնաւ խաւար չկայ: Եթէ ըսենք. «Մենք հաղորդութիւն ունինք անոր հետ», սակայն խաւարի մէջ ընթանանք, կը ստենք ու չենք կիրարկեր ճշմարտութիւնը: Իսկ եթէ լոյսի մէջ ընթանանք, ինչպէս ան լոյսի մէջ է, հաղորդութիւն կ'ունենանք իրարու հետ, եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մեղքէ:

The Epistle of St Paul to the 1 John 1:1-7;

The Incarnation of the Word of Life

That which was from the beginning, which we have heard, which we have seen with our eyes, which we have looked at and our hands have touched—this we proclaim concerning the Word of life. The life appeared; we have seen it and testify to it, and we proclaim to you the eternal life, which was with the Father and has appeared to us. We proclaim to you what we have seen and heard, so that you also may have fellowship with us. And our fellowship is with the Father and with his Son, Jesus Christ. We write this to make our [a] joy complete.

Light and Darkness, Sin and Forgiveness

This is the message we have heard from him and declare to you: God is light; in him there is no darkness at all. If we claim to have fellowship with him and yet walk in the darkness, we lie and do not live out the truth. But if we walk in the light, as he is in the light, we have fellowship with one another, and the blood of Jesus, his Son, purifies us from all [b] sin.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 16:13-17:13

Երբ Յիսուս կ'երթար Փիլիպպոսի Կեսարիային երկրամասը՝ հարցուց իր աշակերտներուն. «*Մարդիկ ի՞նչ կ'ըսեն, ո՞վ եմ ես՝ մարդու Որդին*»: Անոնք ըսին. «Ոմանք կ'ըսեն թէ Յովհաննէս Մկրտիչն ես, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներ ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»: Ըսաւ անոնց. «*Իսկ դո՛ւք ի՞նչ կ'ըսէք, ո՞վ եմ*»: Սիմոն Պետրոս պատասխանեց. «Դուն Քրիստո՛սն ես, ապրող Աստուծոյ Որդին»: Յիսուս ըսաւ անոր. «*Երանի՛ քեզի, Սիմո՛ն, Յովնանի՛ որդի. որովհետեւ ո՛չ թէ մարմինն ու արիւնը յայտնեցին քեզի ասիկա, հապա իմ Հայրս՝ որ երկինքն է: Ես ալ կը յայտարարեմ քեզի. "Դուն Պետրոս ես, եւ այս վէմին վրայ պիտի կառուցանեմ իմ եկեղեցիս, ու դժոխքին դռները պիտի չյաղթեն անոր: Երկինքի թագաւորութեան բանալիները պիտի տամ քեզի, եւ ի՛նչ որ երկրի վրայ կապես՝ երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ, ու ի՛նչ որ երկրի վրայ արձակես՝ երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ"*»: Այն ատեն աշակերտներուն պատուիրեց՝ որ ո՛չ մէկուն ըսեն թէ ինք Քրիստոսն է:

The Transfiguration

Այդ ատենէն ետք Յիսուս ցոյց տուաւ իր աշակերտներուն թէ պէտք էր որ երթար Երուսաղէմ, շատ չարչարանքներ կրէր երէցներէն, քահանայապետներէն եւ դպիրներէն, սպաննուէր ու յարութիւն առնէր երրորդ օրը: Պետրոս մէկդի առաւ զինք, եւ սկսաւ յանդիմանել զինք՝ ըսելով. «Ամե՛նեւին, Տէ՛ր. այդ բանը չպատահի՛ քեզի»: Ինք ալ դառնալով՝ Պետրոսի ըսաւ. «*Ետե՛ւս գնա, Սատանա՛յ, դուն գայթակղութիւն ես ինծի. որովհետեւ ո՛չ թէ Աստուծոյ բաները կը մտածես, հապա՝ մարդոց բաները*»:

Այն ատեն Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «*Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինծի: Որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի համար, պիտի գտնէ զայն: Քանի որ մարդ ի՞նչ օգուտ կ'ունենայ, եթէ շահի ամբողջ աշխարհը բայց կորսնցնէ իր անձը. կամ՝ մարդ ի՞նչ փրկանք պիտի տայ իր անձին փոխարէն: Որովհետեւ մարդու Որդին պիտի գայ իր Հօր փառքով՝ իր հրեշտակներուն հետ, եւ այն ատեն պիտի հատուցանէ իւրաքանչիւրին՝ իր գործերուն համեմատ:*

Ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. "Հոս ներկայ եղողներէն կան ոմանք՝ որ մահ պիտի չհամտեսեն, մինչեւ որ տեսնեն մարդու Որդին՝ եկած իր թագաւորութեամբ"»:

Վեց օր ետք՝ Յիսուս առաւ իրեն հետ Պետրոսը, Յակոբոսն ու անոր եղբայրը՝ Յովհաննէսը, հանեց զանոնք բարձր լեռ մը՝ առանձին, եւ այլակերպեցաւ անոնց առջեւ. իր երեսը փայլեցաւ արեւի պէս, ու իր հանդերձները ճերմակ եղան՝ լոյսի պէս: Եւ ահա՛ Մովսէս ու Եղիա երեւցան անոնց, եւ կը խօսակցէին իրեն հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, լաւ է որ կենանք հոս. եթէ կ'ուզես, շինենք հոս երեք վրան, մէկը՝ քեզի, մէկը՝ Մովսէսի, ու մէկը՝ Եղիայի»: Մինչ ան կը խօսէր, լուսաւոր ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, եւ ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով. «***Ա՛յս է իմ սիրելի Որդիս՝ որուն հաճեցայ. անո՛ր մտիկ ըրէք***»: Երբ աշակերտները լսեցին, իրենց երեսին վրայ ինկան ու սաստիկ վախցան: Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «*Ոտքի՛ ելէք, մի՛ վախնաք*»: Իրենց աչքերը բարձրացուցին ու ո՛չ մէկը տեսան՝ բայց միայն Յիսուսը:

Երբ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս հրահանգեց անոնց. «*Այդ տեսիլքը ո՛չ մէկուն պատմեցէք, մինչեւ որ մարդու Որդին մեռելներէն յարութիւն առնէ*»: Աշակերտները հարցուցին իրեն. «Հապա ինչո՞ւ դպիրները կ'ըսեն թէ "պէտք է որ նախ Եղիա գայ"»: Յիսուս պատասխանեց անոնց. «*Իրաւ է թէ նախ Եղիա պիտի գայ եւ վերահաստատէ ամէն բան: Բայց ձեզի կ'ըսեմ թէ Եղիա արդէն եկած է, ու չճանչցան զայն, հապա ինչ որ ուզեցին՝ ըրին անոր. նոյնպէս ալ մարդու Որդին պիտի չարչարուի անոնցմէ*»: Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչին մասին ըսաւ իրենց:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 16:13-17:13

Peter Declares That Jesus Is the Messiah

When Jesus came to the region of Caesarea Philippi, he asked his disciples, "Who do people say the Son of Man is?"

They replied, "Some say John the Baptist; others say Elijah; and still others, Jeremiah or one of the prophets."

"*But what about you*?" he asked. "*Who do you say I am*?"

Simon Peter answered, "You are the Messiah, the Son of the living God."

Jesus replied, *"Blessed are you, Simon son of Jonah, for this was not revealed to you by flesh and blood, but by my Father in heaven. And I tell you that you are Peter,* [b] *and on this rock I will build my church, and the gates of Hades* [c] *will not overcome it. I will give you the keys of the kingdom of heaven; whatever you bind on earth will be* [d] *bound in heaven, and whatever you loose on earth will be* [e] *loosed in heaven."* Then he ordered his disciples not to tell anyone that he was the Messiah.

The Transfiguration

Jesus Predicts His Death

From that time on Jesus began to explain to his disciples that he must go to Jerusalem and suffer many things at the hands of the elders, the chief priests and the teachers of the law, and that he must be killed and on the third day be raised to life.

Peter took him aside and began to rebuke him. "Never, Lord!" he said. "This shall never happen to you!"

Jesus turned and said to Peter, "*Get behind me, Satan! You are a stumbling block to me; you do not have in mind the concerns of God, but merely human concerns."*

Then Jesus said to his disciples, *"Whoever wants to be my disciple must deny themselves and take up their cross and follow me. For whoever wants to save their life* [f] *will lose it, but whoever loses their life for me will find it. What good will it be for someone to gain the whole world, yet forfeit their soul? Or what can anyone give in exchange for their soul? For the Son of Man is going to come in his Father's glory with his angels, and then he will reward each person according to what they have done.*

"Truly I tell you, some who are standing here will not taste death before they see the Son of Man coming in his kingdom."

The Transfiguration

After six days Jesus took with him Peter, James and John the brother of James, and led them up a high mountain by themselves. There he was transfigured before them. His face shone like the sun, and his clothes became as white as the light. Just then there appeared before them Moses and Elijah, talking with Jesus.

Peter said to Jesus, "Lord, it is good for us to be here. If you wish, I will put up three shelters—one for you, one for Moses and one for Elijah."

While he was still speaking, a bright cloud covered them, and a voice from the cloud said, "This is my Son, whom I love; with him I am well pleased. Listen to him!"

When the disciples heard this, they fell facedown to the ground, terrified. But Jesus came and touched them. "*Get up*," he said. "*Don't be afraid*." When they looked up, they saw no one except Jesus.

As they were coming down the mountain, Jesus instructed them, "*Don't tell anyone what you have seen, until the Son of Man has been raised from the dead."*

The disciples asked him, "Why then do the teachers of the law say that Elijah must come first?"

Jesus replied, "*To be sure, Elijah comes and will restore all things. But I tell you, Elijah has already come, and they did not recognize him, but have done to him everything they wished. In the same way the Son of Man is going to suffer at their hands*." Then the disciples understood that he was talking to them about John the Baptist.

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Հիշատակ հին տապանակի և նոր Ս. Եկեղեցու տոն



Ուխտի տապանակը Հին Կտակարանի ամենամեծ սրբությունն է, որտեղ պահվում էին Տասնաբանյա պատվիրանների տախտակները, Ահարոնի ծաղկյալ գավազանն ու մանանայով լի ոսկյա սափորը: Քրիստոնեական եկեղեցու համար այն Նոր Ուխտի, այսինքն՝ Քրիստոսի Եկեղեցու նախատիպն է, որի համար սահմանվել է այս տոնը՝ Եկեղեցու մշտնջենականության խորհրդով:

Տոնը նշվում է Վարդավառի՝ Քրիստոսի Պայծառակերպության տոնին նախորդող շաբաթ օրը:

Commemoration of the Tabernacle of Old Testament (or the Old Ark) and the Feast of the New Holy Church

Tabernacle of the Old Testament is the most sacred sanctity of the Old Testament, where the board of the Ten Commandments, Aaron's ornament crosier and the golden urn full of manna were kept. Christian Church is considered to be the prototype of the New Testament - that is - the Church of Christ. So, this feast has been included in the calendar to symbolize the mystery of eternity of the Church.

Վարդավառ: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոն

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից երրորդն է: Մեր Տեր Հիսուս Քրիստոս, համաձայն Ավետարանի, Ս. Պետրոս, Ս. Հակոբոս և Ս. Հովհաննես առաքյալների հետ բարձրանում է Թաբոր լեռն՝աղոթելու: Աղոթքի պահին Հիսուս նրանց առաջ պայծառակերպվում է. «Դեմքը փայլեց, ինչպես արեգակը. և Նրա զգեստները դարձան սպիտակ՝ ինչպես լույսը» (Մատթեոս 17:2, Մարկոս 9:2, Ղուկաս 9:29): Աշակերտների ապշած աչքերի առջև Քրիստոս խոսում է շուրջ հազար տարի առաջ վախճանված Մովսեսի և հրեղեն կառքով երկինք համբարձված Ս. Եղիա մարգարեի հետ: Ս. Ղուկաս ավետարանիչը պատմում է, որ նրանք խոսում էին Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերի դեպքերի մասին, որ պիտի տեղի ունենային Երուսաղեմում (Ղուկաս 9:31): Սքանչելի տեսարանից զմայլված՝ Ս. Պետրոս առաքյալը բացականչում է. «Վարդապետ, լավ է, որ մենք այստեղ մնանք. երեք տաղավարներ շինենք, մեկը՝Քեզ, մեկը՝ Մովսեսի և մյուսը՝ Եղիայի համար»: Մինչ Նա խոսում էր, լուսափայլ մի ամպ հովանի է դառնում նրանց, և ամպից եկող ձայնն ազդարարում է. «Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, Դրան լսեցեք»: Հանգստացնելով ու ոտքի կանգնեցնելով գետնամած առաքյալներին՝ Հիսուս նրանց պատվիրում է ոչ ոքի չհայտնել տեսածի ու լսածի մասին՝մինչև Աստծո Որդու փառավորվելը:

Ս. Հովհան Ոսկեբերանը երեք բացատրություն է տալիս, թե ինչու Տիրոջը հայտնվեցին Ս. Մովսես և Ս. Եղիա մարգարեները. երկուսն էլ ունեցել են Աստծո տեսիլքը՝ Մովսեսը՝ Սինա (Ելք 24.12-18), իսկ Եղիան՝ Քորեբ լեռան վրա (Գ Թագավորներ 19:8-18): Նրանք խորհրդաբար ներկայացնում էին կյանքը և մահը: Մովսեսը մահացավ՝ այդպես էլ չտեսնելով խոստացված երկիրը, իսկ Եղիան կենդանի կերպով երկինք վերացավ հրեղեն կառքով:

Հիսուսի պայծառակերպության ժամանակ Մովսեսի՝ նախանձահույզ օրենսդրի ու Եղիայի՝ երկինք տեղափոխված նախանձախնդիր օրինապահի հայտնվելը խորհրդանշում է, որ Քրիստոս է Օրենսդիրը և չի դրժում Աստծո Ուխտը: Նա է Տերը երկրի և երկնքի, ողջերի ու մեռյալների, քանզի Մովսեսին մեռյալների միջից վեր հանեց, իսկ Եղիային՝ողջերի:

Այս տոնը հայտնի է նաև Վարդավառ անունով: Տոնի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողելն ու աղավնիներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը, Նոյի աղավնուն: Սովորություն է նաև ծաղիկներով զարդարվելը, ինչն Աստվածորդու փառքի երևման առթիվ մեծ ուրախության արտահայտություն է:

«Վարդավառ» ժողովրդական անվանումը, հավանաբար, գալիս է վարդաջուր լցնելու սովորությունից:

Ս. Գրիգոր Տաթևացին տոնի «Վարդավառ» անունը բացատրում է Հիսուսին վարդի հետ համեմատելով. ինչպես վարդը մինչև բացվելը թաքնված է իր պատյանի մեջ և բացվելով՝ երևում է բոլորին, այնպես էլ Հիսուս մինչև այլակերպությունն Իր մեջ կրում էր աստվածային էությունը և պայծառակերպվելով՝ հայտնեց Իր Աստվածությունը:

Վարդավառի տոնին նախորդում է շաբաթապահք: Իսկ հաջորդ օրն, ինչպես տաղավար բոլոր տոներից հետո, Մեռելոց է. բոլոր եկեղեցիներում ննջեցյալների հոգիների համար մատուցվում է Ս. Պատարագ և կատարվում հոգեհանգիստ:

Պայծառակերպության տոնով հաստատվեց այն ճշմարտությունը, որ Հիսուս Աստծո Որդին է: Աստծո պատգամն է առաքյալներին և ողջ աշխարհին. «Նրան լսեցեք»:

Feast of Transfiguration of Our Lord Jesus Christ

The Feast of the Transfiguration of Our Lord Jesus Christ is one of the five main “Tabernacle” feasts of the Armenian Apostolic Orthodox Holy Church. It commemorates the transformation or the “transfiguration” that came over Jesus while He was praying. Christ’s face shone like the sun and his clothes became a radiant and gleaming white. The Apostles Peter, James and John witnessed that event which occurred on a high mountain named Tabor.

Evangelists St. Matthew, St. Mark and St. Luke testify about the transfiguration of Jesus in the Gospels (Matthew 17:1-13; Mark 9:1-12, Luke 9:28-36).

“... As they looked on, a change came over Jesus: his face was shining like the sun and his clothes were dazzling white. Then the three disciples saw Moses and Elijah talking with Jesus. So Peter spoke up and said to Jesus, “Lord, how good it is that we are here! If you wish I will make three tents here, one for you, one for Moses and one for Elijah.” While he was talking, a shining cloud came over them, and a voice from the cloud said, “This is my own dear Son, with whom I am pleased – listen to him!” When the disciples heard the voice, they were so terrified that they threw themselves face downward on the ground. Jesus came to them and touched them. “Get up,” he said. “Don’t be afraid!” So they looked up and saw no one there but Jesus. (Matthew 17:2-8)

In the Armenian Church, the Feast of the Transfiguration of Our Lord Jesus Christ is celebrated 98 days following Easter. The Feast also is known by the common name of “Vardakas”. This day is associated with an old Armenian tradition of pouring water on one another. Some sources attribute the tradition as a remnant of an Armenian pre-Christian celebration. The Monday following the Feast is a Memorial Day.

DAILY BIBLE READINGS FOR 2022 **According to the Lectionary of the Armenian Apostolic Church**

25July	Exodus 19:9-13; 2 Kings 2:9-12; 1 John 5:9-12; John 1:1-17
26 July	Exodus 19:16-20; 1 Kings 19:11-16; Hebrews 12:18-27; Luke 9:27-36
27 July	1 Corinthians 1:1-8; Matthew 17:21-18:4
28 July	Prophet Isaiah Isaiah 6:1-10; Hebrews 11:32-40; Luke 4:14-23
29 July	1 Corinthians 1:10-18; Matthew 18:2-9
30 July	The Holy Apostle Thaddeus (Jude) and St. Santookhd the Virgin Wisdom 1:1-7; Jeremiah 16:16-21; 1 Corinthians 12:28-13:10; Luke 9:1-6

food▪give

The International Christian Food Bank

food▪gives, is your opportunity to share your food with hungry believers around the world.

We live in a world of terrible hunger▪

But some of us have food to spare▪

"You can make a difference by donating dry food to Christians in need"

The Armenian Church Diocese in U.K. is joining the Barnabas Fund Project, in the food▪gives initiative to help Christians in need by donating five types of dry food:

Wheat flour (wholemeal, not self-rising flour)
Rice,
Lentils, (dried)
Chick-peas, (dried)
Soap Bar,
Salt, (preferably bags, not tubs).

Please Join **St Yeghiche Armenian Church** in this drive by donating dried food (not tins) and ensure the items do not contain liquid, oil, or animal products.
We can receive bag sizes up to 3kg. alternatively you can make a financial contribution which will be used to buy the said items and donated to the cause.

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no:42674432, Sortcode:40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F ref: "food▪gives"

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic contributions.

Thank you. Your Christian generosity is appreciated to all those in need.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

"*Նրանց առաջ պայծառակերպուեց. եւ նրա դէմքը փայլեց, ինչպէս արեգակը. եւ նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպէս լոյսը*" (Մատթ.17:2):

Աստծոյ Արքայութեան կանչուած եղբայրներ եւ քոյրեր,

Զատկից գրեթէ հարիւր օր անց է, Քրիստոսի Այլակերպութեան կամ Պայծառակերպութեան տօնն է: Ի՞նչ է այս տօնը, ինչո՞ւ է այն տաղաւար՝ գլխաւոր տօներ շարքում: Հին Կտակարանը կարծես մի գիրք է, որ վերջին գլուխ չունի, եւ Քրիստոսով է յայտնութիւնը լիանում:

Պայծառակերպութիւնը խաչելութիւնից մի քանի շաբաթ առաջ Յիսուսի փառաւոր աստուածային երեւումն է աշակերտներին: Օրեր առաջ Իր աշակերտներին Յիսուս հարցնում է Իր (մարդիկ իմ մասին ինչ են ասում եւ ապա հարցնում՝դուք ինչ եք ասում:

Պետրոսի պատասխանն է՝ "Դու ես Քրիստոսը, կենդանի Աստծոյ Որդին": Սա Աստծոյ Հոգուց առաջնորդուած ասաց Պետրոսը՝ խոստովանելով, որ Յիսուս է խոստացուած Մեսիան):

Քրիստոս Պետրոսին, Յակոբոսին եւ Յովհաննէսին երեւաց Իր Աստուածային շուքով, ուր ըստ Աւետարանի, "ահա նրանց երեւացին Մովսէսն ու Եղիան, որ խօսում էին նրա հետ" (Մատթ.17:2-3): Սա Քրիստոսի մասին վկայութիւն է մեռեալներից՝ Մովսէսի միջոցով եւ ողջերից՝Եղիայի միջոցով: Մովսէսը ներկայացնում է Հին Կտակարանի Օրէնքը, որ խորհուրդն էր այն բանի, որ պիտի հետեւէին օրէնքին, իսկ կենդանութեան օրոք երկինք տարուած Եղիան այն բանի, որ պիտի հետեւէին մարգարէութիւններին:

Օրէնքը վերջնական նպատակ չէ, նրա տառը պաշտող եւ գերի չպիտի լինենք. Օրէնքը միջոց է՝ գալու առ Աստուած, յարաբերուելու Օրէնքը Տուողի հետ Իր Հոգով: Դրա համար տեսնում ենք, որ "մի ամպ նրանց վրայ հովանի եղաւ. ամպից մի ձայն եկաւ, որ ասում էր. «Դա է իմ սիրելի Որդին, նրա՛ն լսեցէք» (Մարկ. 9:6):

Ամպը Սուրբ Հոգին է, որ գրկող օդի պէս ամենուր է, իսկ մեծազոյնը Հայր Աստծոյ վկայութիւնն է՝ իբրեւ Որդի յայտարարելու եւ Նրա առաջ հնազանդութեան կանչելու: Պայծառակերպութեան դրուագում տեսանելի ու զգալի է Սուրբ Երրորդութեան երէք Անձերի ներկայութիւնը: Այն Աստուածայայտնութիւն է Թաբոր լեռան վրա:

Աշակերտները ներկայացնում են եկեղեցին, բոլոր քրիստոնեաներին: Իրենք Քրիստոսի հետ լեռը ելան, այժմ մենք էլ իրենց պիտի հետեւենք, աշխարհի դժուարութիւնների միջով բարձրանանք հաւատքի լեռը՝զգալու Աստծոյ ներկայութիւնն ու պայծառակերպուելու Տիրոջ հետ եւ Տիրոջ լոյսով:

Ինչո՞ւ մկայն այս երէք առաքեալները. Նրանք էին, որ յետոյ պիտի կոչուէին եկեղեցու սիւներ, որոնք իրենց անձով ու խոսքով թթխմոր դարձան այլոց համար: Ըստ Սուրբ Գրքի՝ երկու կամ երէք հոգու վկայութիւնն է դատարանը ճանաչում: Այստեղ երկուսը երկնքից են, երէքը՝ երկրից, վկայելու համար Քրիստոսին՝ իբրեւ Աստծոյ Որդի:

Քրիստոս Մովսէսին մեռելներից, իսկ Եղիային ողջերից էր կարծես կանչել, որպեսզի աշակերտները հասկանային, որ Ինքն է ողջերին արարողն ու մեռելներին յարութիւն տուողը, եւ իշխանութիւն ունի ինչպէս կեանքի, այնպէս էլ մահուան վրայ:

Պատահական չէ, որ Այլակերպութիւնը տեղի ունեցաւ լեռան վրայ: Մովսէսը մարդկանցից հեռու՝ լեռան վրայ ննջեց, իսկ Եղիան լեռան վրայից առանց մահ ճաշակելու երկինք բարձրացաւ: Յիսուս էլ յաճախ էր աղօթքի համար առանձնանում լեռան վրայ:

Պայծառակերպութեան հիմքում Աստծոյ հետ միաբանուելու խորհուրդն է, Նրա զօրութեանն ու փառքին հաղորդակից լինելու երջանկութիւնը: Պետրոսը չէր ուզում, որ այդ պահը վերջանայ, դրա համար էր ցանկանում տաղաւարներ շինել այդտեղ:

Գեղեցիկ կերպով է Սուրբ Եղիշէ վարդապետն իր հիացմունքն արտայայտում.

«Այսօր Թաբոր լեռը պարծենում է առաւել, քան Սինէական լեռը, որովհետեւ նրա վրա ամպ էր ու մշուշ, խաւար ու մառախուղ, ծուխ ու հուր, եւ անարժաններին արգելուած էր նրա վրայ բարձրանալ: Իսկ սա մարմնացած Բան Աստծուդ է լոյսերի մէջ ցոյց տալիս աշակերտներին եւ լուսաւոր ամպով Հօր Աւետիսի Խօսքն է հնչեցնում բոլոր որդիացածներին, թէ արդարների համար ինչ է պատրաստուած ապագայում, եւ որ ճանապարհներ ու վերելքներ կան բոլոր մեղաւորների համար, ովքեր գալիս են Քո հետեւից»:

Սիրելիներ, մենք էլ Քրիստոսի ու առաքեալների հետ բարձրանանք հոգեւոր բարձունքը՝ Քրիստոսի Աստուածութեան դաւանութիւնը շուրթերիս, Սուրբ Հոգու ներկայութեամբ զօրանանք եւ ականջալուր լինենք Հօր խօսքին, որ պատուիրում է Որդուն լսել եւ արժանանալ մեր պայծառակերպութեանն Իր Արքայութեան մէջ:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Հայաստանյայց Եկեղեցու վարդապետները .... Cont from previous issue

Համաքրիստոնեական համբավ ունեցող այս փաղանգի վրա ո՞ր հայազգի վարդապետները պետք է ավելացնել: Այդ մասին Տոնացույցից որպես ցուցմունք ունենք «**Թարգմանիչ վարդապետները**»:

1. **Մեսրոպ**
2. **Եղիշե**
3. **Մովսես Քերթող**
4. **Դավիթ Անհաղթ Փիլիսոփա** (բոլորն էլ Ե. դարու դեմքեր)
5. **Գրիգոր Նարեկացի** (վախճանյալ 1010 թվին)
6. **Ներսես Շնորհալի** (վախճանյալ 1173 թվին)

Բացահայտ է որ այս թվումը սակայն լրիվ չէ տալու համար Հայաստանյայց Եկեղեցու հատուկ «**վարդապետների**» ցանկը: Ուրիշ աղբյուր մը, որպես պատմական տեղեկություն, գալիս է փոքր ինչ ավելի լույս սփռել այս հարցի մասին: **Մեծոփեցի** պատմիչը հիշատակում է մի դեպք ուր Եսայի Նչեցի (վախճանյալ **1335** թվին) մեծ վարդապետը եւ նախակարապետը տաթեւյան վարդապետության որպես թե իր աշակերտներին դասախոսում է լատին մի հեղինակի կողմից գրված «**Առաքինության եւ Մոլորության Գիրք**» – ից: **Մեծոփեցին** մեղադրում է բոլոր նրանց ովքեր իր նման լատին հեղինակություններ նախադասում են հայ Եկեղեցու ընդունած հեղինակություններից եւ անունով հիշատակում է **Ս. Լուսավորիչը**, **Աթանաս հայրապետը, Գրիգոր Աստվածաբան, Կյուրեղ Աղեքսանդրացի, Ստեփանոս Սյունեցի** (վախճանյալ 735 թվին), **Անանիա Շիրակացի, Պողոս Տարոնեցի, Հվիան Օձնեցի, Սարգիս Հաղբատցի, Դավիթ փիլիսոփա, Մովսես Քերթողահայր եւ Ասողիկ պատմիչ** (Տես Ազգապատում հատված 1352): Այս ցուցակը թեեւ չունի հեղինակության մի հանգամանք, բայց զուրկ չէ հեղինակավոր հայ վարդապետները ճշդելու արժեքից:

Ամենից լրիվ եւ հեղինակավոր ցուցմունքը այս հարցի մասին, գալիս է Ձեռնադրության մաշտոցից: Քահանայության եւ նրանից վեր բոլոր Եկեղեցական պաշտոնյաների ձեռնադրության ժամանակ, հրավիրյալից պահանջվում է նախ «**մերժել եւ նզովել**» մի շարք հերետիկոսների, եւ ապա «**հետեւիլ եւ աշակերտել ամենայն ուղղափառ եւ աստվածաբան հայրապետաց**»: Սրանցից անվանական կերպով հիշվում են **20-ը**, որոնց մեջ ներփակյալ են Տոնացույցի «**Երկոտասան Վարդապետներ**»–ը, առավել **Գրիգոր Սքանչելագործ** եւ **Հակոբ Մծբնա հայրապետները**, չենք գիտեր թե ինչ նկատումով, որովհետեւ թեեւ երկեւսն էլ շատ ժողովրդական սուրբեր եղած են, բայց ոչ «**աստվածաբան**» հայրապետներ: Իսկ պակասում են թարգմանիչ վարդապետներից **Գրիգոր Նարեկացի** եւ **Ներսես Շնորհալի**, դարձյալ չենք հասկանում ի՞նչ նպատակով: Հատկապես ուշադրության առնվելիք պարագա է **Շնորհալու** ցանկից դուրս մնալը, վասնզի այն միշտ նկատված է Հայաստանյայց Եկեղեցու ամենից հեղինակավոր «**վարդապետ**»– ներից մեկը: Իսկ իբրեւ «**Թարգմանիչ վարդապետք**» հիշված են լոկ **Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ**, իսկ մնացյալ հայազգիներն են, **Ս. Լուսավորիչ**, առավել «**Որդիք եւ Թոռունք**». **Հովհաննես Օձնեցի** կաթողիկոս հայոց (վախճանյալ 728 թվին), **Հովհաննես Որոտնեցի** եւ **Գրիգոր Տաթեւացի** եւ **Ստեփաննոս Սյունեցի** վարդապետները:

Եթե համադրելու լինենք Տոնացույցի եւ Ձեռնագրության Մաշտոցի տվյալները, մեջտեղ է գալիս մի ուրիշ խումբ «**երկոտասան վարդապետներ**»–ի, որոնք սակայն լինելով ազգով հայ, սեպհական են լոկ Հայաստանյայց Եկեղեցուն: Հետեւյալն է ձեռք բերված այդ ցանկը.

1. Ս. Գրիգոր Լուսավորիչ
2. Ս. Սահակ Պարթեւ
3. Ս. Մեսրոպ Մաշտոց
4. Եղիշե
5. Դավիթ Անհաղթ
6. Մովսես Քերթող
7. Գրիգոր Նարեկացի
8. Ներսես Շնորհալի
9. Հովհան Օձնեցի
10. Հովհաննես Որոտնեցի
11. Գրիգոր Տաթեւացի
12. Ստեփանոս Սյունեցի

Սրանք բոլորն էլ Հայաստանյայց Եկեղեցու տոնելի սրբեր են, բացի վերջինից՝ Սյունեցուց, եւ վերջացնում են «**Եկեղեցու վարդապետներ**»–ի համար մեր թված բոլոր պայմանները: Այստեղ եւս մեզ համար անհասկանալի մնացած է թե **Ստեփանոս Սյունեցին** ինչո՞ւ Տոնացույցում տեղ չի գտել, վասնզի Հայաստանյայց Եկեղեցու ամենից արժանավոր զավակներից մեկը եղած է նա թե իր հմտությամբ եւ թե բարեկարգական գործունեությամբ, թե իր գրական մեծածավալ վաստակով եւ թե ինչ որ ամենից կարեւորն է այս պարագայում – իր սուրբ վարքով: Հույժ նախանձախնդիր եղել է իր ժողովրդի վարք ու բարքի բարեկարգության, որին մինչեւ իսկ զոհ է գնում, նահատակվելով անբարո մի բարձրաստիճան կնոջ կողմից, որին նա իր անուղղա վարքին համար բանադրել էր: Ճգնավոր մի մարդ մինչեւ իսկ մի տեսիլքով նշմարում է նրա երկնային փառավորությունը: Դժվար է նրա Տոնացույցի մեջ չի մտնելուն որեւէ մի բանավոր պատճառ գտնել, մանավանդ որ իր հիշատակը «**Յաամավուրք**»–ի մեջ անցած է, որ է ասել թե սրբացման առաջին քայլը արդեն իսկ առնվել է:

Շնորք արք. Գալուստեան «Տեղիք աստուածաբանութեան»

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There is no memorial service this week at St Yeghiche Armenian Church

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS

Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal
Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.